

169

169

367<sup>4</sup> 2600 1

1111  
169

367

Հ Ի Ն Հ Ա Յ Ո Ց

# ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ

Կ Ր Օ Ն Ը.

Կ ա ղ մ ե ց՝

ԱՒԱԳ ԱԳԷՔՍԱՆԵԱՆ ՉԱՀՄՈՒՐԱԳԵԱՆՑ.



411

73/6

Տպարան Ա. Մ. Ղաղարեանի

1899.

Ի ՍՐՏԷ ՆՈՒԷՐ՝

ԻՆՁ ԴԱՍԱՏՈՒ ԿՐՕՆՈՒՍՈՅՑ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ.



Доволено цензурою 13 Сентября 1899 г. Тифлисъ.

### Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն.

Յառաջաբանովս ցանկութիւն ունիմ յայտ-  
նելու յարգելի ընթերցողներին, որ իմ մի քանի  
կրօնական և եկեղեցապատկան աշխատութիւն-  
ներս լոյս կ'տեսնեն ժամանակի ընթացքում  
հետզհետէ, որոնց հիմքը կազմում է Հայոց  
հեթանոսական կրօնը, առանց որի մնացած-  
ների բացառութիւնը շատ թերի կ'լինի, ուս-  
տի կազմեցի այս փոքրիկ գրքուկը, տեղեկու-  
թիւն տալով՝ համառօտակի Հայոց հեթանո-  
սական կրօնից:

Գրքուկս կազմելու ժամանակ աղբիւրներ  
ունէի պ. Կոստանեանի «Հայոց Հեթանոսական  
կրօնը». և հայր Ալիշանի «Հին հաւատը» և մա-  
սամբ պատմական կէտերում պ. Բալասանեան-  
ցի «Հայոց պատմութիւնը»: Թէև օգտուել եմ  
վերոյիշեալներից, այնուամենայնիւ իմ կարո-  
ղացածի չափ աշխատել եմ բացառել աւելի  
մանրամասն և հասարակ դասակարգին դիւր-  
բմբռնելի, քան հայր Ալիշանը և պ. Կոստա-  
նեանը:

Որովհետև պ. Կոստանեանի գրուածքը  
այնքան խրթին է, որ ոչ միայն հասարակ և մի-  
ջին դասակարգի զարգացման տէր մարդիկ չեն  
հասկանում, այլ և շատ անգամ գիտութեամբ



25-168

169-2000

{378-94}e

հետաքրքրուող և պարապուող անձինք. պատճառ՝ մի տեղ, որ կայ համեմատական լեզուաբանութիւն, արժատական փոփոխութիւն, այնտեղ ձանձրանում են շատ ընթերցողներ և հետաքրքրուողներ. ուրեմն պ. Կոստանեանի «Հայոց հեթանոսական հաւատը» բարձր գիտութեամբ պարապուող անհատներին է տիւրին և հարկաւոր: Գալով՝ Հայր Ալիշանի գրուածքին, նախ՝ շատ երկար է և ապա տաճկահայոց բարբառով, որ ձանձրոյթ է պատճառում ընթերցողին և անհետաքրքրելի մի նիւթ դարձնում:

Վերոյիշեալները 'ի նկատի առած, իմ ընթերցողներին այդ նիւթը դիւրեմբունելի դարձնելու համար, կազմեցի համառօտակի զանազան տեղեկութիւններով և բացադրութիւններով հեթանոս հայերի չ'աստուածների սկզբնապատճառը և նրանց զանազան ժամանակներում տարբեր պաշտածը և պաշտամունքը աւելի մանրամասն, քան մինչև այժմ եղել է. որին կ'հետևեն՝ «Քրիստոնէութեան մուտքը հայաստանում», «Առաքեալներ», «Քահանաներ», «տէրացու», «Անգլիական եպիսկոպոսական եկեղեցի», «Բողոքականաց ծիսակատարութիւն» և այլն:

Աւագ Աղէքսանեան Զահ-Մուրադեանց:

Գտի՛ր քո կրօնականը, իմացի՛ր նորա հիմքը, ազատուի՛ր չար և սնոտի կէտերից, գիտակցօրէն դարձրո՛ւ բնութեան ոգին. ապա առաջ տար մարմնակոնդ, կեանքի վայելքներդ ու հարստութիւնդ. այն ժամանակ միայն ես քեզ կ'սեմ, որ ճշմարիտ ունիս բանականութիւն և նման ես Կէմքովդ ու մարմնի կազմուածքովդ նախաստեղծ մարդուն: Եւ լիրավի՛ այն մարդիկը, որոնք կրօնական զգացմունքներից զուրկ են, նրանց դէմքը ահռելի է և նրանց խեղճը բնականաբար մեռած, որոնցից ոչ միայն խորշում են ասունները այլ և անասունները:

Իսկ թէ մէկը՝ որքան դիւրեմբունելի է դարձրել կրօնականը և նրա հիմունքները, այդ կախուած է երկրի դիրքից, մակերևոյթից, կլիմայից, բուսական, կենդանական և հանքային թագաւորութեանց փարթամութիւնից ու առատութիւնից, հարևան սզգերից, իւր շքեղանից, ընտանեքական լաւ և վատ յարաբերութիւնից, սկզբնապատճառներից, զարգացումից, լեզուից և բնութեան ներդործութիւնից, որոնցից ամեն մի չնչին կէտը առանձին ազդեցութիւն ունի մարդու վերայ:

Ի նկատի առնելով՝ վերոյիշեալ հանգա-  
մանքները առաջ կ'բերեմ հին Հայերի վերայ  
ագղեցուծիւն գործող բոլոր պատճառները մի  
առ մի, և բացադրելով՝ մանրամասն տեղե-  
կութիւններով և հաւաստի աղբիւրներից քա-  
ղած ապացոյցներով, դուրս կ'բերեմ հետեւնս  
Հայերի կրօնը:

Հայաստանը մի լեռնոտ երկիր է, որ հին  
աշխարհի գրեթէ միջնավայրումն է գետեղ-  
ուած. գտնուելով սև ծովի, կասպիականի և  
Միջերկրականի մէջ նա կազմում է մի լեռ-  
նակղի. իսկ կենդրոնական մասից դէպի սահ-  
մանաձայրերը գնալով՝ հանդիպում ենք հո-  
վիտների, արօտատեղիների և դաշտավայրերի:

Հայոց երկիրը մի լեռնայանգոյց է Ստի-  
ալի, Սփրիկալի և Եւրօպալի մէջ և սահմա-  
նակից է Հիւսիսից՝ Վրաց, Աղուանից, Հարաւ  
արևելքից՝ Մարերին, Հարաւից՝ Ասորոց, իսկ  
Արևմտքից՝ Կապատովկիային:

Աշխարհագրական դիրքին նայելով՝ Հա-  
յաստանի կլիման պէտք է լինի՝ ամենաբարե-  
խառն, ամենաքաղցր և ամենաառօղջարար,  
որպէս Իտալիայի, Յունաստանի և ուրիշ շատ  
այդ տեսակ տեղերի առօղջարար կլիման, որով-

Տետև Հիւսիսից փչում էր բեւեռային ցուրտ քամին, իսկ Հարաւից Արեւադարձի հեղձուցիչ տաք քամին, երկուսը միասին խառնուելով կազմումեն զովարար օդ. բայց մինչև միայլը՝ նրանք երկու հակադրութիւններ են կազմում՝ հարաւում աւելի տաք, իսկ հիւսիսում աւելի ցուրտ. ահա այս տեսակ տարբեր կլիմայ ունեցող երկրում ապրող ազգը չէր կարող լինել՝ միաօրինակ և միախորհուրդ. այլ այդ ազգը կ'բաժանուէր զանազան ցեղերի և իւրաքանչիւր ցեղ իւր նահապետի ղեկավարութեամբ կ'ապրէր այստեղ և այնտեղ կտրած միմեանցից իրենց յարաբերութիւնները, նամանաւանդ այն պատճառով, որ հայաստանում կար շատ գետեր և այդ գետերով մի նահապետական ընդանիք բաժանուում էր միւսից. ինչպէս այդ երևում է պատմութեան էջերում հին ազգերի, նամանաւանդ Հայերի մէջ:

Նայելով՝ երկրի դիրքին և կլիմային պէտք էր այստեղի ազգը ըստ սովորութեան, ըստ կազմութեան, ըստ մարմնի գծադրութեան և ըստ պարապմունքի բաժանուած լինէին միմեանցից, որովհետև Հիւսիսային և առհասարակ լեռնոտ մասերում բնակող ազգերի, ցեղերի մէջ տիրում է անկախութեան ոգին, իսկ դաշտային տեղերում բնակուողների մէջ

հանդարտ ու խաղաղ կեանքը. երկրի այն մասը, որ կազմում էր մակերևույթ լի էր բերրի դաշտերով, որոնք մէկին տալիս էին մինչև երեք հարիւր, ճոխ արօտատեղիներով, որտեղի կաթնատու կենդանիները կ'թում էին օրեն երկու երեք անգամ և ամեն մի անգամ կովը տալիս էր 30 գրուանքայ, իսկ ոչխարը 8 գրուանքայ կաթը և այլն և այլն. մի խօսքով կենդանական և բուսական աշխարհը աւելի փարթամ, ճոխ, առատ և պտղատու էին քան Հիւսիսում:

Բնականաբար այդտեղի ժողովուրդը պէտք է ձգտէր պարապուելու՝ երկրագործութեամբ և խաշնարածութեամբ (անասնապահութեամբ). իսկ այն ազգերը՝ որոնք ապրում էին ծովերի լճերի և գետերի շրջակայքում ու ավերում պէտք էր պարապէին վաճառականութեամբ և ձկնորսութեամբ, իսկ այն ազգերը՝ որոնք ապրում էին լեռնոտ և անապատ տեղերում, նրանք ոչնչով չէին կարող պարապուել՝ բացի որսորդութիւնից: Բայց հին ժամանակ Հայոց ազգի մէջ այն ցեղն էր առաջին տեղը բռնում ըստ երևույթին, որը պարապուում էր երկրագործութեամբ, նա մանաւանդ որ պարսից Ջրագաշտական վարդապետութիւնը երկրի մշակութիւնը մարդու հարկաւոր առաքինութիւն-

ներից մինն էր համարուում. նոյն իսկ այժմ Ֆրանսիայում մի որոշ ուղղութեան պատկանող ստուար դասակարգ երկրի հարստութիւնը՝ երկրի մշակութեան մէջ են գտնուում, հակառակ մերկանդելիզմներին, որոնք պնդում են, թէ՛ արդիւնաբերութիւնը մեքենաների և գործարանների մէջ է...

Ինչպէս ասացի, այն ցեղերը՝ որոնք բնակուում էին Հայաստանի սահմաններում այն է զաշտավայրերում, նրանք պէտքէր կազմուածքով թոյլ լինէին և բնաւորութեամբ հանդարտ ու խաղաղ.\*) այս դէպքից օգուտ քաղելով հարեան ազգերը, յարձակուում էին, իրանց ձեռքի տակ առնում, նրանց վերայ հարկ դնում և ձուլում իրենց հետ. և հենց այդ պատճառով ճնշուած ցեղերը ստիպուած պէտք է լինէին շփուել նրանց հետ, վերցնել նրանց սովորութիւնը և ենթարկուել նրանց ազդեցութեան. եթէ պատմութիւնը մենք թերթենք և էջերին ուշադրութեամբ նայենք, կ'տեսնենք, որ ճշմարիտ իւրաքանչիւր մի ազգ իր սովորութիւնը և լեզուի հետքերը թողեց ու հեռացաւ, և եղան այնպիսիները որ ժամանակի ընթացքում կորցրին իրանց նշա-

\*) Թէ ինչու. մանրամասն բացատրութիւններ կարելի է գտնել զանազան բժիշկական գրուածքներում:

նակութիւնը բայց և եղան այնպիսիները, որ նոյն իսկ մինչև այժմ պաշտպանում են իրենց գոյութիւնը: Որովհետև դրացի ազգերը նոր էին սկսում կազմուել, ինչպես Հայերը, ուրեմն նոյն զարգացման և նոյն մտաւոր դրութեան մէջ կ'լինէին, որ և Հայերը չէին կարող օգուտ քաղել դրացիներից մտաւորի կողմից. բայց ժամանակի ընթացքում Ասորիք բաւականի առաջ գնացին ուսման գործում և մի քաղաքակիրթ ազգ էին, որոնք զանազան պատճառներով՝ յարաբերութեան մէջ մտին հայերի հետ. և Հայերը այդ դէպքից օգուտ քաղելով սեպհականացրին նոցա կըրթութիւնը, արուեստները, գրութեան եղանակը և մինչև անգամ կրօնական զգացմունքների այլ և այլ փոփոխութիւնները: Հարկ է զգացուում իմանալ Հայերը ինչ զարգացման մէջ էին, որ ուսման վերաբերեալ ուրիշի ազդեցութեան տակ ընկան:

Հայ ազգը՝ որ ըստ աւանդութեան Հայկի շառաւիղներից է սիրած, իւրաքանչիւր մի անհատ իւր քաղաքակիրթութեամբ մի աստիճանի վերայ էր կանգնած հեթանոսութեան դարերում, այդ երևում է այն գողթան երգերից, այն աւանդութիւններից, այն առասպելներից, որ մենք պատահում ենք Հայոց պատմու-

Թեան և զանազան վիպասանութիւնների մէջ, մինչև Գրիստոնէութեան մուտքը. օրինակ «երկնէր երկին և երկինք»... և այլն. այս առասպելութիւնը բոլորի համար իրական դարձած բերնէ բերան, սերնդէ սերունդ աւանդում էին. և բացի սորանից սկզբում լեզուն այնքան աղքատ էր, որ մի ահագին պատմութիւն համառօտ խօսքերով էին աւանդում իրենց սերնդին: Օրինակի համար. մէկը՝ փոխանակ պատմելու այն դէպքը, որ իւր մի որ և իցէ ազգականը մի ուրիշ երկրում ընկել է պատերազմի դաշտում և այդ երկիրը գըտնւում է ծովի միւս կողմը, այլ նշանով ցոյց էր տալիս ծովը և մեռնել բառի նշանը, ինչպէս Եգիպտոսում և ուրիշ երկրներում, նոյնպէս և Հայերի մէջ. օրինակ տալով՝ այժմ բուշմէնները և ուրիշ շատ ազգեր, որոնք լեզուի կողմից աղքատ են. ուշ դարձնելով՝ Հայոց պատմութեան և վեպասանութեան կ'տեսնենք միևնոյնը. օրինակ եթէ՝ մէկը արել է պատմութեան արժանի մի որ և իցէ գործ, չէին կարողանում նկարագրել այդ դէպքը այնքան տհաս էին, այլ առակի ձևով, առասպելախառն մի ոտանաւոր կամ մի քանի տող ասուածք էին հիւսում, որի մէջ պարանակում էր իրենց բոլոր զգացմունքները դէպի այդ

լաւ կամ վատ, չար կամ բարի գործը կամ անձնաւորութիւնը, օրինակ. «տեղ տեղայր ոսկի փեսայութեան Արտաշէսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթենիկի». փոխանակ պատմելու այն բոլոր մանրամասնութիւնները, որը պատահել է հարսանեաց ժամանակ սկզբից մինչև վերջը. և այդ ասուածքը որովհետև մի անհատի ուղեղի արդիւնք չէ, ուստի ասում էին ժողովրդական զրոյց. ուրեմն այս բոլոր օրինակներից հետևում է, որ բոլորը միևնոյն աստիճանի վրայ էին կանգնած. դորա պատճառը՝ ոչ միայն այն էր, որ դառեր չունէին, այլ և լեզուի ու բառերի աղքատութիւնն էր:

Համառօտակի լիշելով՝ երկրի դիրքը, մակերևոյթը, կլիման, ժողովրդի պարապմունքը, շրջապատող ազգերի զարգացումը և նոյն իսկ Հայերի զարգացումը, պէտքէ սրանցից դուրս բերեմ, թե Հայերը իրենց զգացմունքները խառը հոգևոր դրութեան հետ, ինչ գերագոյն էակի էին յատկացրել:


Որքան մենք խորը թափանցենք մի որ և իցէ ազգի կեանքի հանգամանքների մէջ, այնքան մենք կ'համոզուենք, որ իւրաքանչիւր ժողովուրդ հենց իւր գոհութեան սկզբից պիտի ունենայ իւր կրօնը. որովհետև մէկ

ժողովուրդ ազգ է՝ երբ նա իւր հոգևորով և մարմնաւորով մի ամբողջութիւն է կազմում. և որ նա իւր քաղաքական և բարոյական կեանքը, պատմական յառաջագիմութիւնը լաւ արտայայտելու և զիւրըմբռնելի դարձնելու անհրաժեշտ է իւր կրօնական իմացմունքը և գործը, պարզապէս ասելով՝ իւր հաւատքը. որովհետև չկայ մի ազգ, որ չունենայ իւր սրտի կամ հոգու խորագոյն իմացմունքը կամ կրօնական զգացմունքը և հաւատքը. լինի թէ՛ քաղաքակիրթ և թէ՛ վայրէնի. (ըստ ոմանց այժմ ոչ միայն վայրէնիները, կենդանիները այլ և միջատները ու զեռուռնները անգամ ունին կրօն և կատարելութիւն: Դէպք եղաւ, առականեր ժողովելոյս ժամանակ, լսեցի պառաւ կանանցից ու մարդկանցից կենդանիների ու զեռուռնների կրօնական ծիսակատարութիւններից, որոնցից՝ կ'պատմեմ իմ ընթերցողաց հետևեալը. ասում էին, երկու ականատես ծերեր, որոնք նստած ինձ հետ խօսում էին. փորձելու համար մի անգամ սպանում են մի մրջեմն\*) դրա մօտ կանգնած է լինում մի ուրիշը, որը խսկոյն և եթ փոխում է գնալու ընթացքը, ու հետ

\*) Մրջիւն.

դառնում իրենց բունը, որի հեռաւորութիւնը լինում է սպանուած մրջեմից երեք քայլ հեռաւորութեան վերայ. մտնում է ներս և դուրս գալիս կէս ըոպէից յետոյ, իւր հետևից շարուած մօտ երեսուն քառասուն մրջեմներ, որոնք արագընթաց գնում են մօտենում սպանուածին, շրջապատում ու սկսում դառն կերպով կսկիծ յայտնել, համբուրել, փաղաքշել և լաց լինել, որը երևում էր սպանուածի մարմնից, որի վերայ ջրի մանր կաթիլներ էր երևում. յետոյ չորսը մօտեցան և դիակը վերցրին իսկ մնացածներն էլ հետևից շարեշար գնացին մինչև մի որոշ տեղ, որտեղ ցած դրին և շրջապատուեցին, նորից նոյն գործողութիւնը, որից յետոյ սկսեցին հողը կանոնաւոր փորել, մարմինը գրին հողի մէջ, ծածկեցին ու ցրուեցին): Թէպէտ և իւրաքանչիւր մի տեղ, իւրաքանչիւր մի ժողովուրդ իւր հաւատքի առարկան փոխելով՝ մոռանում է ճշմարիտ, ամենագէտ և ամենաիմաստ Աստուծոյն և իւր գաղափարի հիման վերայ և բնութեան ազդեցութեան տակ ընտոււնում մի ուրիշ գերագոյն էակ. սակայն չկայ մէկը՝ որ ժխտած լինի գերագոյն էակին և չկայ պատմութեան մէջ մի շրջան, որ ազգեր կամ անհատներ դադարացրած լինին այն զգացմունքը՝ այն յարա-

ԹԴ - 94  
 169-2000



բերութիւնը, որ կայ գերագոյն էակի և մարդու մէջ. ահա այդ յարաբերութիւնը կոչուում է կրօն: Այդպէս եղել է, այդպէս էլ լինում է և այդպէս էլ կ'գնայ: Բայց պէտքէ ստենք, որ բոլոր գաղափարները, որոնք վերցրել են ճշմարիտ գերագոյն էակի տեղ, ամեն ազգերի մէջ կոչուել են Աստուած. որոնց կեանքը կախուած էր զրանից և որոնք զրանով մտածում էին հանդերձեալի մասին:

Սովորաբար Աստուած անունը Մովսիսի ժամանակ «էն» կոչուեց. բայց լետոյ ինչպէս Ագաթանգեղոսն է ասում, Աստուած նշանակում է աստ ածող կամ արարածների ստեղծող, որը ասում է Ադամ մի վկայութեամբ, որը դարձրել է օձը Նւային. «Զի է զի ասաց արարիչն՝ որ աստ էած զձեզ և զաստ էածն Աստուած արարին»: Այս բացառութեան համաձայն են և ուրիշ շատ հեղինակներ. սակայն ճշմարիտ գերագոյն էակի անունները բազմաթիւ է. օրինակ. «բան», «հոգի», «էն», «է», «Արարիչ» և այլն. միայն այս անուններից ազգերի բերանում գործ ածուելիս են եղել Աստուած բառը. նոյն իսկ այժմ: Ուրեմն այդտեղից պէտք է եզրակացնենք, որ թէև՝ հեթանոս Հայերը լաւ գաղափար չեն ունեցել ճշմարիտ էակի մասին, այնուամե-

նայնիւ Աստուած անունը մնացել է նրանց մէջ, որով և կարելի է բացառել, որ նրանք ունեցել են անգիտակցաբար ճշմարիտ Աստուծոյ գաղափարը: Ինչպէս ասացի այդ գաղափարի հետ ունեցած յարաբերութիւնը՝ որը լինում է հոգեւոր, կոչուում է կրօն. իսկ կրօնից դուրս է գալիս հաւատքը, որ նշանակում է յարաբերութեան մէջ մտնել գաշինքով, խոստմունքով, հաստատութեամբ և այլն. . . . կայ և դաւանանք որ հաւատի մի աստիճանն է. կայ և աղանդ՝ որ նշանակում է մոլար վարդապետութիւն (որոնց մասին կ'իտուեմ առանձին գրքոյկով):

Հաւատքի արտայայտիչներն են՝ աղօթք, աղերս, աղաչանք և այլն. իսկ դէպի գերագոյն էակ տածած ծէսերն են՝ պատարագ, պաղատանք, պագանել և այլն: Գուրս բերելով՝ որ հեթանոս հայերը որոնց էին ընդունում, իրենց գերագոյն էակը. այժմ հետքերը է իմանալ՝ թէ որտեղից էին ըմբռնում այդ գաղափարները և ի՞նչպէս էին ստեղծում իրենց կրօնը:

Ասացինք, որ ժողովուրդը Հայաստանում երկրի զիրքի և կլիմայի համաձայն զանազան պարապմունքներ ունէր, օրինակ. լեռներում ապրողները պարապում էին որսորդութեամբ

և մասամբ անասնապահութեամբ: Որսորդութեամբ պարապուողները գործ ունէին անտառների, անապատների և լեռների հետ. միորևիցէ անհատի եթէ որսորդութեան ժամանակ յարմարուում էր որսը բռնել՝ այսինչ ծառի, կամ այն ինչ թուփի օգնութեամբ, սկսում էր մի տեսակ յարաբերութեան մէջ մտնել այդ անշունչ արարածի հետ. և դէպի նա հոգևոր իմացմունք արտայայտել, որպէս թէ՛ այդ բանին թուփը կամ ծառը իմացականութեամբ օգնեցին նրան. կամ եթէ ծառերի տերևները խշշում էին և այդ ըոպպէին դուրս էր գալիս իրենց առաջ մի որս, իսկոյն և եթէ հասկանում էին, որ ծառերը իրենց տերևների շարժումներով, կամենում էին իմաց անել, դարձեալ սէր էր տածում դէպի անտառը. կամ թէ չէ՛ երբ միորևիցէ վնասակար կենդանի էր դուրս գալիս որսորդի առաջը, վերջինս եթէ սովորաբար չէր կարողանում ձեռքի կամ գէնքի ուժով պաշտպանուել, բարձրանում էր այս կամ այն ծառի գլուխը և կամ թագ էր կենում մի որ և իցէ լերան խորշում և այլն:

Ահա վերոյիշեալ բոլոր պատճառները տեղիք էր տալիս որսորդին, որ իրեն յաջողուեց որսը բռնել՝ կամ ազատուել կենդանու ճանկերից, այդ բոլորը վերագրել այս լերան կամ

այն ծառին ու թփին. ուստի սկսում էր ամեն դէպքում լիշել անտառներին, լեռներին և ամեն բանի մէջ նրանց անունը տալով՝ առաջ դնալ. բայց որովհետև կատարեալ հաւատքով և ջերմեռանդ զգացմունքով էր լինում, ուստի և կատարում էր. ինչպէս այժմ բժիշկները՝ հիւանդներին բժշկում են հաւատալով և համոզեցնելով: (Մի փիլիսոփայ բբժշկապետ դառնում է հիւանդին և հարցնում. «հաւատում ե՞ս, որ քո ծանր հիւանդութեանը պատճառը քո վերարկուն է»): այն, պարոն բժիշկ ես էլ համոզուած եմ, որ այդպէս է, որովհետև շատ է փափուկ. «դէհ ուրեմն հանեցէք. ինչպէս էք զգում այժմ ձեզ»): շատ թէթև և ընդունակ. «ինչի մէջ» առողջութեանս և շարժուելուս. «դէ, գնացէք...» հիւանդը՝ որ եկել էր անյոյս ու անտանելի չարչարանքների մէջ, ամբողջ մարմնի ոսկրացաւից (բէմատիգմից) այժմ արագ քայլերով և առողջ մարմնով ընթանում է դէպի տուն, ըոպպէական համոզմունքի ազդեցութեան տակ. իսկ բժշկապետը այնտեղ իւր լիշատակարանի մէջ է մտցնում «հաւատքը և համոզմունքը զօրեղ է և առողջարար բոլոր դեղերից\*»): Մի ուրիշը ասում է. «եթէ քարին

\*) Лекарство.

ջերմեռանդ սրտով, կենդանի հաւատով ընտուներս, որ օգնել, բժշկել կարող է, ճշմարիտ կ'բժշկուես. այդ սովորութիւնը կար և հնումը, որի հետքերը և մնում են այժմ. հիւանդին մի որ և իցէ նահատակի, մարտիրոսի կամ խաչի մօտ կանգնեցնում են և մի քար կապում, տալիս ձեռքը թէ սա է քո տեղը, ձգիր վրան, վերջինս էլ կատարելով յաճախակի պատահում է, որ նոյն հիւանդութիւնը թողնում է. կամ երբ անծննունդ կին է լինում, մօտենում է խաչին համբուրելու, մէջքին իսկոյն և եթ մի քար են դնում, ծեծելով կրկնում, ծննդաբեր եղիր, ծննդաբեր եղիր... կատարուելուց յետոյ հաւատում էին, որ կայ նրանց մէջ մի գերբնական զօրութիւն և պաշտում էին ընդունելով՝ իրենց գլխաւոր գերագոյն էակը:

Դաշտային տեղերում ապրում էր այնպիսի ժողովուրդ, որը պարապում էր երկրագործութեամբ. գործի ասպարիզում երկիրը պարարտացնելու կամ վարելու կամ հընձելու ժամանակ եթէ գալիս էր անձրև, ձիւն կամ կարկուտ և վնասում էր իրենց արտերին այդ դէպքում երկրագործը ստիպուած էր դէպի հեղէղները տածել երկիւղածութիւն, ահ ու դող և վերջը յարգանք, վախ, սէր դէպի նրանց,

որ կարողանայ ազատուել գերբնական զօրութեան պատիժներից. և երբոր անձրևը, ձիւնը կամ կարկուտը վերջանում էր, երկրագործը կարծում էր, որ ահա իրեն խնդրուածքը լսեց ու կատարեց գերբնական զօրութիւնը և ուրեմն սահման դրեց, որ պէտքէ միշտ դէպի նա երկիւղած լինել՝ և պաշտօն մատուցանել, որ այնուհետև մեզ չի վնասիլ ու պատժիլ և այլն. կամ եթէ՝ նայում էր և տեսնում մի բարձր լեռու, որի մէջից արագվիժում է հրահալելիք, լաւալ կամ բարձրանում էր ծուխ և որը չի տեսել ինքը իւր երկրում, իսկոյն և եթ կարծում էր, որ լեռուը կամենում է իրեն վնասել, ուստի սկսում էր աղաչել, պաղատել, որ իրեն ազատ պահի այդ տեսակ փորձութիւնից:

Նոյնպէս վաճառականութեամբ պարապուողները, երբոր ճանապարհորդում էին ջրերի վերայ, պատահում էր այնպիսի ժամանակ, որ փոթորիկ էր բարձրանում և ահա այդ ժամանակ սկսում էին դարձեալ խնդրել, աղաչել, պաղատել այն զօրութեան, որը ուզում էր խորտակել, որ ազատ պահի չարից ու փորձանքից, ինչպէս այդ մնացել էր և Աստուածպաշտութեան (ժամանակ) դարերում, երբ նաւի վերայ ճանապարհորդելիս քամին բար-

ձրացաւ, վիճակ ձգելով՝ Յովնանին ծովը ձգեցին, հաւատալով՝ որ լետու ծովը կ'հանգարտուի և ճշմարիտ հանգարտուեց. ահա փոթորիկը վերջացաւ թէ չէ, նրանց կարծիքը այս էր, եթէ մենք խնդրած չ'լինէինք, նա չէր ազատիլ մեզ, ուրեմն եթէ այդպէս է, մենք այսուհետեւ պիտի յարաբերուի՞նք մէջ մընենք նրա հետ երկիւղածութեամբ, սիրով և ամօթխածութեամբ: Ահա այսպէս էին վերաբերում զէպի բնութեան երևույթները, զէպի կենդանական, բուսական և հանքային թագաւորութիւնը. և մարդկանց ունեցած յարգանքը, հսգւոր յարաբերութիւնը զէպի բնութեան իրերը կոչուած է կրօն. իսկ պաշտամունքը՝ բնապաշտութիւն կամ նիւթապաշտութիւն և կամ տարրապաշտութիւն. իսկ այդ կրօնը մարդկանց սրտում երկու ձևով կիրք է յառաջացնում՝ սէր և վախ. ինչպէս՝ հիմա ճշմարիտ կրօնի հետևողներին կոչում են Աստուածասէր և Աստուածավախ կամ երկիւղած, ուղիղ ճշմարիտ կրօնի համար ծառայում է սէրը, իսկ մոլոր վարդապետութիւնների համար վախը:

Դեռ սկզբում իւրաքանչիւր մի անհատ որպէս զի իւր պաշտելի առարկաները միշտ ներկայ լինի իրեն, վերցնում էր իւրաքանչիւր

մի առարկայից՝ մի օրինակ և պահում իւր տանը և երբոր իւր գործը յաջողուած էր, դալիս էր, պաշտելի առարկային փաղաքշում, լաւ պահում ու պահպանում. բայց երբոր անյաջող էր լինում, դալիս էր կոտրատում, փշրում ու մի կողմը ձգում, դարձեալ մի ուրիշ անգամ պատրաստում:

Ժամանակի ընթացքում անհատների պաշտելի իրերը միացրին և ընտանեկական շինեցին բայց լետու ցեղի, ժողովրդի և ազգի դարձաւ: Եւ որովհետեւ երկրի գիրքը լեռնային էր և դաշտային, ուստի զանազան կլիմայի տակ զանազան տեսակ պաշտելի առարկաներ ունէին. օրինակ մի տեղ տաք, դաշտային, բերրի հարուստ և ճոխ բուսականութեամբ. միւս տեղը՝ ցուրտ անապատային, լեռնային, աւազոտ, աղքատ և այլն. մի տեղ բնութեան երևույթները խիստ օգտակար, միւս տեղը չափազանց վնասակար. ուստի և բնապաշտները իրենց պաշտելի իրերը բաժանում էին երկու մասի լաւ և վատ, բարի և չար. լաւն ու բարի գաղափարը յատկացնում էին նրանց, սրօնք կեանք էին ներշնչում, տալիս էին ընդարձակ ասպարէզ, յաջողակ գործ, լույս, լույս հանդերձեալ կեանքի և այլն. իսկ վատն ու չարը նրանց էին յատկացնում, սրօնք բնդ-

Հահառական էին գործում. բայց հեթանոս  
 Հայերը բնապաշտութեան մէջ միշտ հահառած  
 են եղել զէպի բարին ու լաւն և ոչ չարն  
 ու վատը. այդ երևում է նրանից, որ մինչև  
 այսօր չկայ մի չաստուծոյ անուն, որ չարին  
 լինի պատկանելիս:

Այժմ տեսնենք ամբողջ Հայոց ազգը ինչ  
 էր պաշտում բնութիւնից:

Նախ՝ անտառին. ինչպէս երևում է սօ-  
 սեաց անտառից, որ միշտ նրանով գուշակու-  
 թիւններ էին անում:

Երկրորդ՝ լեռան. որ Մասիսի գլխին  
 երևակայում էին քաջքեր, հրէշներ այսինքն  
 աներևոյթ գօրութիւն. այդ երևում է Արտա-  
 ւազդի վերաբերեալ խօսքերից. «Ի ու յորս հեծ-  
 ցես յԱզատ ՚ի վեր ՚ի Մասիս, Զքեզ կալցեն  
 քաջք, տարցին յԱզատ ՚ի վեր ՚ի Մասիս, անդ  
 կալցեն զքեզ և զլոյս մի տեսցես»:

Երրորդ՝ կրակին. սրա համար ծառայում  
 էր շատ փաստեր, բայց առաջ կ'բերեմ հե-  
 տեւեալ վկայութիւնը խորէնացւոց. երբոր Ար-  
 տաշիր Սասանեանցը սպանեց Տրդատի հայր  
 խոսրովին, մի քանի տարի իշխեց Հայոց վե-  
 րայ և բաղգաւոր կարծեց իրեն, երբ այստեղ  
 գտաւ այն՝ ինչին որ ինքը հիմնադիր եղաւ  
 Պարսկաստանում և հրամայեց մշտական պա-

հել. «Զհուրն Որմզտական որ ՚ի վերայ բազ-  
 նին, որ ՚ի բազաւան»:

Զորրորդ՝ ջուրը. այդ երևում է նրանից,  
 որ մինչև այժմ զանազան աղբիւրներ, գետեր  
 և ջրեր մեր մէջ զանազան հրաշքներով են  
 լիշում և որովհետև մի որ և իցէ բան եթէ՝  
 սկսում էին պաշտել նրան առասպելներով և  
 հրաշքներով էին զարգարում, նոյնպէս էլ  
 ջուրն է եղել, որ մինչև այժմ մեր մէջ կայ.  
 օրինակ՝ կաթնաղբիւր, լիւսաղբիւր, Ժանգ-  
 ջրոյն, կարմիր և սպիտակ, որոնք բոլոր  
 էին կուսանների աղօթքով և ծառայում էին  
 աչքի ցաւի համար. տաք ջուր, թթու ջուր,  
 քորի աղբիւր և այլն. որոնք զանազան բժշ-  
 կութիւններ էին գործում. հենց այժմ տար-  
 ձեալ ջուրը պաշտելի է, որովհետև Քրիստո-  
 նէական կրօնի մէջ, հոգին սուրբը որպէս  
 ներքին մաքրեցնող մի գօրութիւն, իսկ ջուրը  
 արտաքին, որով սրբում մաքրում են և լետոյ  
 իւզով, սուրբ մեռունով օծում:

Հինգերորդ՝ օգեղէն երեւոյթներին. սը-  
 րանց պաշտելու համար կայ հետեւեալ տեղե-  
 կութիւնը, որը վերցրած է Յոյներից, որպէս  
 թէ՛ Լիպարս իշխանը հալածուելով իւր եղ-  
 բայրներից, գնաց մի կղզի, որտեղ թագաւո-  
 րում էր հողմերի չաստուածը:

Վեցերորդ՝ երկնային մարմիններին. բնու-  
թեան վերջիշեալ երևոյթներից, որոնց աս-  
պարէզը երկինքը և երկիրն է, գլխաւոր տեղն  
են բռնում երկու մեծ լուսաւորները և աստ-  
ղերը. վերջիշեալները համարուել են երկրիս  
վերայ պատահող ամենօրեայ դէպքերի սկզբը-  
նապատճառը:

Արեգակի և լուսնի ընթացքը, փազը  
աստղերի ծագելու ու մայր մտնելու կարգա-  
ւորութիւնը սովորեցրել էին մարդոց օրերի,  
ամիսների, եղանակների և տարիների փոփո-  
խութիւնները. օրինակ՝ օրը (ցերեկը), գիշերը  
գարուն, ամառ, աշուն և ձմեռը ու դրանց  
բնութեան փոփոխութիւնը. հասարակ և նա-  
հանջ տարու տարբերութիւնը և այլն: Երկ-  
րագործական աշխատանքների և քաղաքա-  
կան կեանքի պարապմունքների կարգ ու կա-  
նոնը, իսկ աստղերի շարժման և նոցա միմի-  
եանց հետ ունեցած յարաբերութիւններից,  
որոշում էին իրենց ճանապարհները, որի սո-  
վորութիւնը մնացել է մինչև այժմ և մեր  
հասարակ հին նահապետական տան ընտա-  
նիքներում. աստղերին զանազան ժողովրդա-  
կան անուններ տալով՝ կտրում էին իրանց  
ճանապարհը, օրինակ՝ լույս աստղ, շամփուր  
կշիւ, պողաւոր (սորան աստղապաշտութեան

մէջ «պոչաւոր» են ասում), քարվանդրան,  
պեգակ և այլն: Գուշակում էին ճակատագրի  
գաղտնիքը, որի կարգալու և իմանալու ձևը  
մնացել է միշտ մեր հմայողների և կախարդ-  
ների մէջ, որոնք նայելով և գիր անելով՝ սա-  
տանաներ են բռնում, չար գեւեր են հանում  
մարդուց, հիւանդներին բժշկում, քամու բե-  
րանի աստղը, որի գոյութիւնը մի չնչին բա-  
նից է կախուած, հետ են դարձնում, կրկին  
մէջ տեղը բերում. չար աստղը բարի են  
դարձնում, անբախտը՝ երջանկացնում, դորա-  
նով մարդկանց սիրտը գրաւում, աստղը գե-  
ղեցկացնում\*) և այլն և այլն: Ուրեմն այս  
բոլորը լինելուց յետոյ, նրանք ուզէին — չ'ու-  
զէին պէտք է պաշտէին և իրանց էակներից  
գլխաւոր տեղը տալին:

Գրականական ասպարիզում արեգակը  
համարում էր արական սեռի Աստուած, իսկ  
լուսինը իգական. մինչդեռ կայ մի ժողովր-  
դական ասուածք թէ արեգակը աղջիկ է, իսկ  
լուսինը տղայ, որպէս թէ երկուսը՝ խօսելիս  
են եղել թէ մեզանից՝ օրը գիշերն կատարի  
իւր ընթացքը. արեգակը որպէս աղջիկ ամա-

\*) Կարող եմ այնպէս գեղեցկացնել այս ինչ, կամ  
այն ինչ աղջկայ աստղը, որ ձեր սրտի ուզած աղան  
գայ ձեռը խնդրի. ասում է կախարդներից մէկը:

չելուց յանձն է առել գիշերը. բայց քիչ ժամանակից լետոյ, ասել է. «որ ես վախենում եմ գիշերը շրջելուց, պէտք է ցերեկը կատարեմ իմ ընթացքը. բայց որպէս զի մարդիկ ինձ չ'նայեն ես կ'վերցնեմ բազմաթիւ ասեղներ ու կ'ծակծկեմ ինձ նայողին և հաւանական է, որ աղչպէս լինի. որովհետեւ գերմանացիները լուսին բառը արականի տեղ են ընտուռում, իսկ արեգակ բառը իգականի տեղ. բայց և այնպէս մինչև այսօր ժողովրդի բերանում կայ հետեւեալ աւանդութիւնը, որպէս թէ՛ լուսինը, ինչպէս աղջիկ, միշտ նստած էր լինում մօրը մօտ. ցերեկը առանց մի տեղ հեռանալու, մի անգամ մայրը, Մարիամ Աստուածածնին խմոր էր հունցում, լուսինը չբհեռացաւ և շատ նեղացրաւ, մայրը բարկացաւ և ձեռքերը խմորթաթախ հանեց դաշտից ու խփեց նրան, որի ձեռների տեղը մնում է մինչև այսօր երեսին. եթէ՛ նայէք, կ'տեսնէք, որ ճշմարիտ կայ այդ տեսակ մի նշան\*): Արեգակը ունի նաև ուրիշ անուններ. այն է՝ արև, արեգ, արփի և այլն:

Երկնային լուսատու մարմինները այնքան խոր արմատ էին գրել հեթանոս հայերի մէջ,

\*) Ի հարկէ այժմ այնտեղ աշխարհ են բացազրում և ոչ խմոր:

որ նոյն իսկ մեր եկեղեցական գրականութեան մէջ, արեգակի և լուսնի անունը շատ անգամ է յիշում Փրկչի փոխանակ. օրինակ՝ «Արեգակն արդարութեան», «լոյս ի լուսոյ», «ճառագայթ փառաց», «հուր փայլակնացեալ» և այլն: Նոյն իսկ Քրիստոսին նմանեցնելով արեգակին, իսկ լուսնին տիրամօր, ասում է հետեւեալ՝ շարականը, «Սրբուհի ի լիբանանէ դիմեալ հարսն զգեցեալ զԱրեգակն արկեալ զքե և ընդ ոտիւք զլուսինն ստուերատեսակ»:

Հայոց ամիսներից մէկի անունը նրա անունով գրին արեգ. Արցախ կոչուեցաւ Արևինք և չ'նայելով նրան, Քրիստոնէութեան մուտքից լետոյ սկսեցին հեթանոսներին հալածել՝ այնուամենայնիւ մինչև XIII դարը, տեսնում ենք Արևորդիները դարձեալ գոյութիւն ունէին. եթէ ճշմարիտ մեծ տեղ են տուել Արեգակին՝ առհասարակ լուսատու մարմիններին, այդ երևում է նրանից, որ մինչև այժմ եթէ՛ մէկը ուզում է մի բան ասել, և հարկաւոր է յիշել այդտեղ հաւատի աղբիւր, նա իսկոյն և եթ յիշում է քո արևը վկայ, քո արևը զիտենայ, քո արևիդ մեռնեմ, արևդ սիրեմ, արևդ սիրես և այլն. և մինչև անգամ զանազան անուններ դնում են արեգակի և լուսնի անունով, օր. Արշալոյս, Արեգնազան

Արուսեակ, Լուսնեակ և այլն:

Թէ եղել է երկնային լուսատու մարմինների պաշտամունք, այդ երևում է Վաղարշակի խօսքերից, որ ասում է. «Մեհեանս շինեալ լ'Արմաւիր անդրիս հաստատ է Արեգական և լուսնի» Խ. II. ը:

Եւ երկրորդ՝ որ Արշամ թագաւորը ստիպում է Ենանոս հրէային առաջ երկրպագանել Արեգակին և լետոյ պաշտել արքային կուռքերին: Խոր. II. ժթ:

Ուստի սովորաբար նրանց մեհեանները շինում էին լերան ծայրին և ուրիշ բարձր տեղերում, որպէսզի դուրս գալուց թէ չէ սկսեն երկրպագանել և մայր մտնելուց էլ ուշ հեռացնեն աչքերից:

Բնապաշտութեան ժամանակ Հայերը հարրգակցութիւն են ունեցել հարևան ազգերի հետ և իւրեանց նշանաւոր լեզուի մնացորդները թողել են այն ազգերի լեզուների մէջ, որոնք աւելի քաղաքակրթուած էին քան թէ Հայերը. օր. Սանսկրեաները, Զենդերը, Յուները և այլն: Հայոց լեզուի այս ցեղակցութիւնը ուրիշ նշանաւոր լեզուների հետ տեղիք է տալիս մեզ կարծելու, որ Հայոց հեթանոսական կրօնը ևս մասամբ շատ մօտ է եղել այն ազգերին և մանաւանդ հին Պարսից կրօնին:

Արդի մի քանի ժողովրդական նախապաշարմունքները և սնտփապաշտութիւնները կարող են մեր առաջին աւելի զօրեղ ապացոյց լինել: Օրինակ՝ մութ ժամանակ դռնովը ջուր չեն թափել, երեկոյան տուն չեն սրբել, խոր տեղերով, մութ տեղերով, ջրի մօտով, յօրանջելու ժամանակ երեսիդ խաչ հանիր, ուրբաթ օրը, կիւրակի երեկոյեան գլուխ չեն լուանալ, կրակի վերայ ջուր չեն ածիլ, երեխան քառասունքումը տնից դուրս չեն տանիլ, տանը մենակ թողած ժամանակը աւելը կ'դնեն մօտը, ծննդաբերի գլխի տակին երկու ձու կ'դնեն, երեկոյեան հագուստ չեն ձևիլ և այլն և այլն. որոնք անթիւ ու անհամար են. այս ամենը սակաւ տարբերութեամբ հին Պարսից հեթանոսութեան մէջ ևս եղած է, որ երևում է Զրադաշտի պատուէրներից և մեկնիչների խօսքերից. ուրեմն տեսնում ենք որ հեթանոսութեան փոշին, դարձեալ այսօր մնում է հին նահապետական ընտանիքներում և մինչև այսօր Քրիստոնէութեան բոլոր բարոյական միջոցները չեն կարողացել, անհետացնել հեթանոսութեան դարաւոր հետքերը:

Այսպէս տեսնում ենք, որ հին հեթանոս Հայերի կրօնական հայեացքը նման է եղել Պարսից կրօնական հայեացքներին. իսկ թէ

ինչ ժամանակի ընթացքում, որպիսի գաղափար է ունեցել իւր գերագոյն էակի մասին դարձեալ մօտ է Պարսից. թէև վերջինս չարն ու վատը հաւասար է ընդունել լաւի և բարու հետ. բայց հայը իւր յառաջադիմութեամբ չ'մնաց այնպէս, ինչպէս մնացին պարսիկները, այլ մի առանձին ընթացք բռնեց և ունեցաւ իւր առանձին եկամուտ տարրերը, իւր առանձին քաղաքական ասպարէզը և իւր յատուկ պատմութիւնը, որ արձանագրուած է մեհենական լիշատագրերի մէջ: Ասացինք, որ հայը իւր հոգու և սրտի իմացումները տածել էր զանազան պատճառներով զէպի բնութեան. բայց որպէսզի իրականացրած լինի ամեն մի պաշտելի իր իւր առաջ, սկըսեց մտածել դրա մասին, որ և յաջողուեց Արտաշէս առաջինի ժամանակ Յոյներից փոխարինել կուռք, արձան, անդրի և այլն մարդու ձեւքով շինուած մի բան, որ զանազան իրերի զօրութեան գլխաւորն էին ընդունում և փոխանակ այս կամ այն իրին երկրպագանելու պաշտում էին դրանց, ճանաչելով իրենց գերագոյն էակը. բայց որովհետև այդ զօրութիւններից մէկը պէտքէ լինէր ստեղծող՝ միւսներին, մէկը իմաստացնող, մի ուրիշը՝ զգաստացնող, մի երրորդը՝ գեղեցկացնող. ուս-

տի տալիս էին զանազան անուաներ. որ հասկանում էր թէ ինչի չ'աստուածն է:

Այժմ ես առաջ կ'ըբերեմ հետևեալ նշանաւոր չ'աստուածները, որոնք նշանաւոր դեր էին խաղում հայոց գլխին:

Ա. գլխաւոր և մեծ չ'աստուածը կոչւում էր Արամազդ. այս անունը նոյն է ինչ որ Յոյների Դիոս կամ Թէոս, որից և մնացել է Փրանսերէն Դիեօ (Dieu). իսկ պարսից մէջ Ահուրամազդա որ նշանակում է իմաստուն էակ, իմաստուն տէր և այլն

Սա կոչւում է արարիչ երկնի և երկրի և բոլոր չ'աստուածների. նրան Տրդատը պատուում էր արի մականունով. սա է, որ երկրին շնորհում է ամենայն տեսակ բարութիւն, լիութիւն և պարարտութիւն: Արամազդ գերագոյն էակի գլխաւոր աթոռը գտնւում էր բարձր Հայքի Կարանաղեաց գաւառի Անի ամրոցում և Պաղատայ լեռան վերայ: Ծնունդներից յայտնի էր Միհր որդին և Անահիտ ու Աստղիկ դուստրները, իսկ միւս չ'աստուածները՝ որ ես համառօտ կ'ըթուեմ, սրա ծնունդը չի համարուում: Սրան պաշտում էին տեսանելի պատկերների առաջ, որ կանգնած էր լինում մեհեններում և բազիներում:

Արամազդի ծնունդներից ամենապան-

ծախն և փառաւորք Անահիտ տիկինն է: Տրդատ համարում էր նրան զուստր Արամազդայ: Իսկ յայսմաւուրի մէջ լիշուում է հետեւելը. «իգական պատկերն Անահտայ կնոջն Արամազդայ»: Անահիտ անունը ցոյց է տալիս մայր ամենայն զգաստութեան:

Զգաստութիւն խօսքը մի բազմաբովանդակ բառ է, որ իւրաքանչիւր մի մարդ իմաստութեան, ժրաշանութեան հետ պէտք է ունենայ զգաստութիւն առաքինութեան, որովհետեւ վերջինովս է ճանաչուում մարդու բարեբարութիւնը, պարկեշտութիւնը, ողորմածութիւնը և այլն: Օրինակ՝ զգաստ կինը կարող է լաւ տանտիկին լինել. զգաստ երիտասարդը արժանաւոր ժառանգ հասարակութեան համար. զգաստ օրիորդը երիտասարդի ապագայ պանծալի փառքը. զգաստ աշակերտը ամենայառաջադէմը, զգաստ մարդը լաւ ծնող, խնամատար, տէր, կառավարիչ և հասարակութեան պիտանի անդամ կարող է լինել: Ուրեմն եթէ բոլորը զգաստ լինէին և ճանաչէին իրենց պարտականութիւնները, այն ժամանակ երկիրը նրանց առաջ կ'բացուի ամենայն բարեքներով, բարու և լոյսի արգասիքներով. իսկ հակառակ դէպքում չարի և խաւարի մէջ տապալուելով կ'ոչնչանայ ամբողջ

աշխարհը, և ցած կ'գլորուին ամենքը իրենց պատուանունն նշանակութիւնից:

Անահիտ նշանակում է ամբիծ, անարատ, մաքուր և այլն: Հայոց սէրը դէպի Անահիտը արտայայտուում է նորա պաշտամունքի մէջ. առաջին՝ որ իւրաքանչիւր մի թագաւոր, մի իշխան նրանից էր խնդրում, խնամակալութիւն իրեն երկրի վերայ և երկրորդ՝ որ արձանները համարեա միշտ լինում էին ոսկեայ և մեհեանները գտնուում էին Հայաստանի գանդան կողմերում: Հեռաւոր տեղերից գնում էին Անահտի բազինը, նրանից խնդրելու զգօնութիւն, արիութիւն, բեղմնաւորութիւն, ծննդաբերութիւն, առատութիւն և այլն:

Ինչպէս պաշտօնով, նոյնպէս և պաշտօնատեղիքով Անահիտը օտար ազգերի մօտ հռչակուած և մեծահանգէս էր: Անահտի միհեանները գտնուում էին Երիզայում, Արտաշատում, Աշտիշատում որտեղ է և այժմ Սուրբ Կարապետի վանքը. նոյն իսկ այժմ շատ անձնաւորութիւններ գնում են Սուրբ Կարապետից ստանալու զգօնութիւն, արիութիւն, զգաստութիւն, աշըղութիւն, լաբախաղութիւն և այլն. ալդ սովորութիւնը պէտքէ համարել մնացորդ հեթանոսութեան հետքերին և կրօնին. որովհետեւ այն ժամանակ էին

գնում և խնդրում Անաստից. արձաններ կային Վասպուրականում և ուրիշ շատ տեղեր:

Անասիտին կոչում էին ոսկեմայր, ոսկե-  
Տատ, ոսկեծին և այլն անուններով. այդ  
մականուններից մէկը մինչև այժմ մնացել է  
և կալ յատուկ անուն. ինչպէս օրինակ Անա-  
Տիտ, Ոսկի, Ոսկան, նրա անունովն էր Հայոց  
գաւառներից մէկը. այն է՝ Անաստական գա-  
ւառ. այս բոլոր հանգամանքները ապացու-  
ցանում են, որ Անասիտ տիկինը այնքան ժո-  
ղովրդականութիւն ունէր, որ մինչև անգամ  
Քրիստոնէութեան այս երկար դարերում ան-  
կարելի է եղել անհետացնել նրա լիշատակը:

Անաստի քոյրն էր Աստղիկը գեղեցկու-  
թեան չաստուածուհին. հեթանոս Հայերի  
ջերմեռանդութիւնը առ Աստղիկ զիցուհին այն-  
քան մեծ էր և հայեցուածքները վսեմ, որ իւր  
գաղափարի մէջ գեղեցկութեան լծակից տղա-  
մարդու ամենալաւ յատկութիւնը համարուած  
էր միայն քաջութիւնը:

Աստղիկի պաշտամանց տեղերն էին Աշ-  
տիշատ աւանը, որտեղ և կար Անաստի մեհ-  
եանը. կար և Պաղատայ լեռան վերայ Արա-  
մազդի հետ. հայ ժողովուրդը գալիս էր ուխտ  
երկուսի համար ամանօրիայի տօնին, որ կա-  
տարւում էր նաւասարդին:

Աստղիկը նաև կոչւում էր հեշտութեանց  
չ'աստուածուհի, որովհետև նրան ուխտ գնա-  
ցողները խընդրում էին ուրախութիւն, փափ-  
կութիւն, գուարճութիւն և ինքը յորդորում էր  
եկողներին իրենց կեանքը անցկացնել վերո-  
լիշեալների մէջ: Գրիգոր լուսաւորելը տեսնե-  
լով՝ որ Աստղիկի տօնը կատարւում է մեծ շու-  
քով, նոյն իսկ Քրիստոնէութիւնը ընդունելուց  
յետոյ, ուստի պատուիրեց փոխանակել Քրիստո-  
սի պալծառակերպութեան 'ի թափօր լերին.  
Թէ ժողովրդականութիւն է ունեցել, այդ ե-  
րևում է նրանից, որ մինչև այսօր նրա անու-  
նով յատուկ անուն կալ. ինչպէս Աստղիկ, Աս-  
տի և այլն:

Չաստուածներից նշանաւոր էր և Վա-  
Տագն որը Աստղիկի ամուսին էր կոչւում. նա  
յայտնի էր իւր քաջութեամբ և վսեմութեամբ.  
քաջ էր, ոչ միայն երկրի վերայ, այլ և  
երկնքի. ինչպէս պատմում են յարգազողի  
կամ կաթնածերի մասին. թէ նա գնաց եր-  
կինք և Բարշամի յարդը գողացաւ իւր սեն-  
եակը բերեց և իւր այդ քաջութեան անջըն-  
ջելի հետքերը թողեց երկնային կամարի վե-  
րայ, որ այժմ յաճախակի տեսնում ենք աս-  
տղերի փայլով կազմուած լուսոյ ճանապարհը  
և պատմում են՝ թէ դա դարման է, որ

մինչև այսօր մնում է երկնքի սրօշ տարածութեան վերայ, որպէս թէ Բարշամի պարկի մի կողմը ծակ է եղել և երբ վերցրել է բերելու, թափուել է ճանապարհին իսկ յարդը որպէս թէթև մի բան, կամ աւելի ճիշտն ասած Աստուածային մի հրաշք չի թափուել մնացել է կանգնած, և ունի իւր լուսափայլ ճանապարհը:

Վահագնի պաշտելի տեղն էր Աշտիշատում սենեակ Վահագնի անունով, իսկ իւր մեհեանը Վահեփունեան Վահագն վիշապաքաղ անունով: Թէ Վահագն հին հայոց մէջ առանձին նշանակութիւն և ժողովրդականութիւն ունէր, այդ երևում է նրանից, որ Վահագնի ծննունդը այլաբանօրէն էին հնչեցնում սերբնդէ սերունդ. «երկնէր երկին և երկիր, երկնէր և ծիրանի ծով... այս ասուածքի մէջ է գտնուում նրա ամբողջ չաստուածութեան գաղափարը. և լետոյ պատմում են թե երբ գահի վերան նստեց և սկսեց որպէս Հայկազանց թագաւոր երկիրը կառավարել, առաջին գործը այն եղաւ, որ ամբողջ երկիրը վիշապներից մաքրեց, որոնցից մինչև այդ ժամանակ ոչ ոք չէր մօտենում, ուստի և շատ շատերը վնասուում էին վիշապներից. սա ոչ թէ զուտ պատմական է այլ առասպելախառն մի

աւանդութիւն:

Նանէ՛ հնարագիտութեան ու իմաստութեան չաստուածուհին, որի բազինը գրտնուում էր բարձր Հայքի, Դարանաղեաց գաւառի Թիլ աւանում. հայ կնոջ ներկայացուցին է եղել, որովհետև հայ կինը ինչ որ անում էր, նրանով էր գործում, հենց այդ է պատճառը, որ այժմ տան մեծ կնոջը ասում են Նանէ կամ Նանի, որ նշանակում է սնունդ տուող. թէ սա ժողովրդականութիւն է ունեցել, այդ երևում է նրանից, որ նախ՝ իբրև պատիւ տան մեծին են ասում նանի, իսկ երկրորդ՝ որ մինչև այսօր կայ յատուկ անուն. օրինակ՝ Նունէ, Նեանն Նունուփար և այլն:

Հայր Արամազդի գերգաստանի չորրորդ՝ անդամն էր նորա օրդի Միհր Աստուածը, որ «գգաստութեան, գեղեցկութեան և հնարագիտութեան» զիցուհիների հարազատ եղբայրն էր: Նրա գործն էր հսկել ուխտապահութեան վերայ և պատժել ուխտագրութենքին. մեհեանը գտնուում էր բարձր Հայքի Կերջան գաւառի Բազառիճ աւանում. ի նշան նորա ընդարձակ ժողովրդականութեանը հայոց ամիսներից մէկի անունը նրա անունով միհրական կամ մեհեանական էր կոչուում

և կալ հայոց մէջ նրա անունով շատ լատուկ անուններ. օրինակ՝ Միհրան, Մեհրուժան, Միհրշապուհ, Միհրդատ, Մեհենտակ և այլն:

Հայր Արամազդի գերդաստունը ամբողջացնելու համար հարկ է խօսել թէ ինչ էր նրա կնոջ անունը և ինչ գաղափարի պատկեր էր: Մեզ յայտնի է որ անունը Սպանդարամետ էր և նրա մէջ էր պատկերացած երկրի ծննդականութեան գաղափարը անտեսանելի կերպով. իսկ տեսանելի պատկերը երկիրս էր, որ ընդունակութիւն ունէր ծնանելու, բուսցնելու, աճեցնելու ամենայն ինչ. ուստի և լծակից էր Արամազդին. ինչպէս տան կինը մարդուն ամեն դէպքում լծակից և օգնական, այնպէս էլ Արամազդը և Սպանդարամետը որպէս ամուսիններ ձեռք ձեռքի տուած էին գործում ու աշխարհս իրանց ապահովութեան տակ պահում:

Հայոց չաստուածներէց էր Ամենաբեղը, որը պողաբերութեան\*) չաստուածն էր, որի մեհեանը գտնուում էր Բագրևանդի Բագաւան

\*) Հաւանական է, որ մեր եկեղեցու հայրերը նկատել են՝ որ Ամենաբեղի պողաբերութեան ընծայարբրութիւնը խոր արմատ է ձգել հայ ազգի սրտում, ուստի փոխած լինին այդ տօնը Սուրբ Աստուածածնայ տօնին, խաղողորհնակին:

աւանում:

Նշանաւոր էր և Տէրը (Տիւր), որը Արամազդի դպիրն էր և մեհեանը գտնուում էր Երևանու և Արտաշատի մէջ տեղը, Երազմոյն աւանում:

Սպանդարամետին աջակցում էին և Հօրօտն, Մօրօտն, Մասեաց քաջերը և այլն:

Ինչ որ ասացինք մինչև այժմ հեթանոսական կրօնի մասին, թէպէտ և շատ թերի է, սակայն ներկայացնում է մեզ հին հայ ժողովրդի գաղափարների հայելին: Սակայն հարկ է լինել թէ այսքան զանազան ծագումներով կրօններ ընդունող և պահպանող ազգը ինչպէս թողեց այն բոլորը և ընդունեց մի այլ բարձր կրօն:

Հայերը հետզհետէ զարգանալով՝ ուսման ու գիտութեան մէջ առաջ գնացին. այս բանին վկայում են, նոյն իսկ շրջապատող ազգերը, որոնք ասում էին թէ՛ հայերը մաքրասէր բարքի տէր, խուսափող չար եղեռնագործութիւններից ու աղտեղութիւններից, հնարագէտ ու տնարար, սիրող շինութեան ու հաստատութեան, ցանկացող յառաջադիմութեան, հաւատարիմ ու տիրասէր, պահպանող Արարչից տուած ուխտը, յարգող երգման նշանակութիւնը, հիւրասէր և անձնա-

դո՛՛հ մի ազգ է:

Ուրեմն եթէ մի ազգ ունի այս բոլոր բարոյական, պատմական և քաղաքական կատարելութիւնները, նա պէտքէ անպատճառ լաւն ու վատը, չարն ու բարին, կեղծն ու ճիշտը, եղածն ու չեղածը, արարիչն ու արարածը միմեանցից զատի. և ահա այդ ժամանակուանից անհատներ իրանց բարձր կատարելութեամբ, զարգացումով և բանականութեամբ առաջինը եղան ամբողջ ազգերի մէջ, որոնք խոյս տուին, հեթանոս սքնոտի կուսպաշտութիւնից և ընդունեցին մի գլխաւոր հակի, որը ոչ թէ անշունչ էր և տեսանելի ինչպէս Արամազդը, այլ ունէր այն բոլոր բանականութիւնը, այն բոլոր կատարելութիւնը, իմաստութիւնը, որ ստեղծող էր հանդիսանում երկնի և երկրի և բոլոր արարածներին. բայց ճշմարտին պաշտում չէին լոկ իմանալի կերպով, այլ հոգով սրտով: Այդ ժամանակներից գերագոյն հակը տեսնելով, որ ճշմարիտ Աստուածապաշտութեան գաղափարը կամաց-կամաց ընդունւում է, նա մտածեց զարկ տալու համար ընտրել՝ կենդանի հոգի ունեցող և հաւատացեալ անձնաւորութիւնների և դարձնել իրեն պաշտօնեալ. որոնք պետքէ տարածէին Աստուածապաշտութեան գաղա-

փարները հեթանոսների մէջ. ընդունելուց առաջ նրանց սրբում էր, ինչպէս Երեմիային, որ սրբեց մօր որովայնի մէջ. և տալիս էր շնորհք ու Աստուածային գաղափարներով ոգեւորելով ուղարկում էր այս կամ այն ժողովրդի մէջ, այս կամ այն բազիները. որոնք ճշմարիտ Աստուծոյ զօրութեամբ և շնորհքով կուռում, վիճում էին թագաւորների, քրմապետների, քրմերի հետ և լողթող հանդիսանում. ինչպէս Եղիան՝ Բահաղի բազինի առաջ. Գանիէլ Նաբոգոտոնոսորի պալատում և այլն:

Ահա այդ օրերից սկսած, շատերը առաջ գնալով մտածում էին, որ ճշմարիտ չի կարող մարդկանց ձեռքով պատրաստած մի արձան կամ լաւ գործել, կամ վատ. կամ բարի կատարել կամ չար. ուստի ժամանակի ընթացքում Գերագոյնի — այսինքն Աստուծոյ ձեռքով ընտրուած անձնաւորութիւնները կարողացան փչացնել մեհեանները, ջարդ ու փշուր անել արձանները և ժողովրդի մեծամասնութեան դարցնել միաստուածեաններ (Մօնօտէիստի) իսկ կուսպաշտները վերջինիս հակառակ կոչուեցան բազմաստուածեաններ (պօլէտէիստի):

Երկու կողմի խմբերը շարունակ կուռում էին, բայց միշտ լողթող էին հանդիսանում նրանք, որոնք որ իրենց ճշմարիտ գերագոյն

Կակին կամ իրենց սրտի և հոգու թելադրած գաղափարին ընդունում էին աներևոյթ Կակին, որ հաւատացած էին պտտում է աշխարհիս ամեն կողմերում: Միաստուածեաններից կային այնպիսի բարեպաշտ, հիւրասէր, ընկերասէր, ջերմեռանդ աղօթող, լի հաւատքով անհատներ, որ մինչև անգամ աներևոյթ Կակը մարդու կերպարանքով գալիս էր և նրանց հետ խօսակցում. ինչպէս Աբրահամը և որին «խոստացաւ», որ իւր որդիներից մէկը դուրս կ'գայ և կ'օրհնէ երկրիս վերայ բոլոր ազգերին. բայց շատ անգամ ճշմարիտ Աստուծոյն պատողը, իւր հաւատքը խեղտում էր և ընդունում կռակաշուտութիւն. ինչպէս օրինակ Իսրայէլացիները Կարմիր ծովով անցնելու ժամանակ Աստուած առաջնորդում էր նրանց և նրանք միշտ չաջողութիւնների մէջ էին լինում, մինչգեռ թշնամիները չարաչար տանջում, պտտում էին. բայց դարձեալ մոռանում էին իրենց օգնողին, իրենց մանանայով կերակրողին և ոսկի օղերից հորթ պատրաստում, որ պաշտեն:

Այսպիսի երախտագիտութեան համար Աստուած տալիս էր նրանց պատիժներ զանազան մարդկանց միջոցով. ուղարկում էր հեռաւոր երկիրներ մարդարէներ, որպէս զի

կարողանան լետ դարձնել չար ճանապարհից բայց չէր լինում: Ուստի Աստուած միշտ խըղճում էր, որ իւր ստեղծած ազգը փչանում է առանց ըմբռնելու գլխաւոր Կակի զօրութիւնը և դրա համար նա մտաբերեց իւր «խոստումը»: կատարեց իւր ձեռքով ընտրած ու սրբած մարդարէների գուշակումը և ուղարկեց աշխարհի Փրկիչը. որը ծնուեց Աբրահամիցեղից, Իսաթի սերընդից. որի մասին դուրս կ'գայ առանձին գրքոյկով «Քրիստոնեութեան մուտքը Հայաստանում»:



Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher due to the bleed-through effect.

583  
~~1087~~

ՀՀ Ազգային գրադարան



NL0596870

